

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## „ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԻՆ ՄԵՋ“

ՄԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Բուենոս-Այրես, տպարան «Արարատ», 1954 թ., 70 էջ)

1954 թվականի աշնանը, Բուենոս-Այրեսում, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Երիտասարդաց կազմակերպության հրատարակության միջոցով «Երանանք» տպարանից լույս տեսավ Հայաստանի Ամերիկայի հայոց Հայրապետական նվիրակ գերազնոր՝ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանի «Հայրենի երկրին մենք» հայրենասիրական վառ հուշերի, սրտագին ու անմոռանալի տպավորությունների այս գեղեցիկ և պատկերազարդ հավաքածուն, որպես սրբազան հեղինակի վերջերս դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին և դեպի մեր սիրելի Հայրենիքը կատարած երկրորդ ուկտազնացության սերտառու և խորը ապրումների կենդանի արտահայտություն և հուշարձան:

1954 թվականի մայիսին ի Տեր հանգյալ Ամենայն Հայոց Հիշատակալի Հայրապետ Նորին Ս. Օծոթյուն Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսը, Երանանքը և աստվածաբալ Հայրապետի մահը արժանավոր և անկեղծ վշտով ողբաց հայ հավատացյալ ժողովուրդը և՛ Մայր Հայրենիքում և՛ Սփյուռքում: Մենք էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վիշտն ու կորուստը. Եկեղեցին կորցրել էր իր մեծագործ ու հավատավոր Հովվապետին, Հայրենիքը՝ իր մեծ ու հավատարիմ քաղաքացուն, իսկ հայ ժողովուրդը՝ իր միծառազանդ ու արժանավոր զավակին:

Նվ ահա համազգային այս սգի, վշտի օրերին, մոտիկ և հեռավոր հայ զաղութներին, մեր եկեղեցական թմերին Ս. Էջմիածին էին փոխացել մեր եկեղեցական և աշխարհական պատգամավորները՝ սգակիր սրտով իրենց որդիական հարգանքն ու սրտագին մեծարանքը հայտնելու մեծ Հանգուցյալի հիշատակին հայրենասիրական բոցավառ զգացմունքով ու կարոտով համբուրելու հայրենի սրբազան հոգը, որի տերն է այսօր Հայրենիքում ապրող հայ ժողովուրդի հոծ ու աշխատունակ մայր զանգվածը, և ողբագուրվելու՝ Հայրենիքի իրենց հարազատների հետ, որոնք



այսօր իրենց մտքի, հոգու, սրտի մեռնաբույր գեղեցկություններն են թափում ամեն մի քարի, ամեն մի թիզ հողի ու թղթի վրա:

Պատգամավորները իրենց վերադարձին, իրենց հետ տարան Ս. Էջմիածնի օրհույությունը, Մայր Հայրենիքի պատգամը, նրա սրտագին ու սրտաբույր ողջունը՝ Սփյուռքի հայրենակարոտ հայ ժողովուրդին:

Պատգամավորներից շատերը մամուլում, բանասիրություններում, իրենց հայրենասիրական ելույթներում պատմեցին իրենց ականատեսի տպավորություններն ու հուշերը. զգարտեսանքն և լուար, պատմամբ ձեզ, զի և դուք հաղորդութիւն ունեցիք ընդ մեզ:

Պատգամավորները խոսեցին Ս. Էջմիածնի մասին, պատմեցին մեր լուսաշող Հայրենիքի մասին, և իրենց հայրենասիրական ելույթներում մի անգամ ևս ոգևորեցին ու խանդավառեցին տարագիր հայ սրտերը՝ Հայրենիքի սիրով և պայծառ իրականությամբ:

Հայ ժողովուրդի համար միշտ էլ նվիրական է եղել Հայրենիքի պատգամը. Տարագիր հայ ժողովուրդի սիրտը միշտ էլ բարասել է հայրենասիրական վառ զգացմունքով, որովհետև այսօր հայ ժողովուրդը ազգային հպարտության ամենաազնիվ զգացմունքներով է լցված դեպի իր Սովետական Հայրենիքը, և վառ հիացմունքով է ընդունում ամեն մի «խարբիկ» իր Հայրենիքի մասին: Սովետական Հայրենիքի լուսաշող իրականությունը հայ սրտերում վառել է բոցաշունչ հայրենասիրության սրբազան հուրը: Այդ հուրը մի անգամ ևս են բորբոքել ահա մեր պատգամավորները իրենց ելույթներով: Վեհափառ Հայրապետի մահը մի նոր ու սրտառուլ առիթ է հանդիսացել Սփյուռքի հայության սրտաբույր վերաբերմունքի, որդեական սիրտ և հնազանդության դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, և ազգային հպարտության՝ դեպի մեր պանծալի Հայրենիքը:

Պատգամավորներից մեկն էր Նաև Սիոն սրբազանը, որն իր «ողորմելի խաբրիկներով», վերադարձի իր ճանապարհի վրա, ավելի քան 70 հայրենասիրական ելույթներ է ունեցել Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի մասին։ Սիոն սրբազանը սրտեր է խանդավառել Հայրենիքի շքեղ զգացմունքով, իր ականատեսի վկայություններով և հուշերով, ու հայրենասիրության, եկեղեցասիրության աստղը սերմեր է ցանել ավետարանի բարի սերմնացանի նման, իր անցած ճանապարհի վրա։ Եվ դա պատահականություն չէր, որովհետև հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունը Սիոն սրբազանի նկարագրի ամենաբնորոշ գծերից մեկն է հանդիսանում Հայրենիքի գաղափարը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սերը կարմիր թևին նման անցնում են սրբազան հեղինակի ողջ կյանքի և գործունեության միջով։ Եվ ահա այդ երկու խորը և մեծ զգացմունքները մղել են Սիոն սրբազանին՝ թղթի հանձնելու իր հոգեկան տարումներն ու հայրենասիրական վառ զգացմունքները Հայրենիքից և Ս. Էջմիածնից, որպես մշտական խանդավառության աղբյուր հայրենակարոտ հայ ժողովրդին։

«Հայրենի երկրին մեջ» — ծավալով փոքր բայց հուզմունքներով հարուստ և արժեքով մեծ այս զրբույկը — Սիոն սրբազանի երկրորդ գիրքն է, նվիրված Հայրենիքի հուշերին և տպավորություններին։

1946 թվականին Նյու-Յորքում լույս տեսավ Սիոն սրբազանի «Ամիս մի Հայաստան» պատկերազարդ գիրքը՝ դեպի Ս. Էջմիածին և Հայրենիք կատարած առաջին ուխտագնացության տպավորությունների, հուշերի, խորհրդածությունների առաջին գիրքը։

«Հայրենի երկրին մեջ» գրքույկը բացվում է հայ ժողովրդի հավերժության խորհրդանշան հանդիսացող Մատենների նկարով, որոնք իշխում են ողջ Արարատյան դաշտին և հայ ժողովրդի սրտի վրա։ Ապա հաջորդ էջերում՝ հայ ժողովրդի Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնի նկարը, որպես մեր ազգային-եկեղեցական միասնության սրտատուը խորհրդանշան, իր թևերի տակ է կանչում ողջ հայության, ապա Վեհափառ Հայրապետը, քահանայապետական իր լրիվ զգեստավորման մեջ, իր հայրապետական պատգամն է տալիս իր փրկեցյալ հոտին. «Հայր բացի Մովսեսական Հայաստանից, չունի այլ Հայրենիք։ Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կովան, բայց եթե Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով»։

Գրքի հաջորդ էջերում, փոքր ենթավերնագրերի տակ, Սիոն սրբազանը ամփոփ բայց ամբողջական ձևով նկարագրում է պատգամավորության սգալից երթը Ս. Էջմիածին. «Մինչ Էջմիածնի զանգակները տխուր կողողանան... Մայր Տաճարի մեջ մեր աղոթքը կխառնվի մեր սրբազան հայրերու աղոթքին»։

Տրամադրյալ ողով ու թափմանով է նկարագրվում Համբարձման օրը թաղմանական արարողությունը, սուրբ պատարագը, վերջին օծումը, երբ ամեն ինչ մահվան խորհրդով էր համակված. «Դարավոր զանգակները կհնչեն մահասարսուտ և սգավոր ղողանջով... Սուգ է պատեր Մայր Աթոռը, սև է ծածկեր

հայոց աշխարհը... մահվան ցարսափելի ուրվագծեր իջած է հայության սիրտին վրա...»։ Եվ ապա երեկոյան անսահման լուսավառ ու խաղաղության մեջ, հայ ժողովրդի ցավի և արցունքի մեջով, խնկով ու աղոթքով «սև հողին կհանձնվի երկման Հայրիկ և Ներսիս Առաքելների մեծանունն ու հայրենասիր կաթողիկոսներու շիրմներուն քով բացված գերեզմանի մեջ... մեր ժամանակի մեծագույն հայ եկեղեցականին ու շինարար և շնորհաբար Հայրապետի մարմինը...»։

Տրամադրյալ այս պարտականությունը կատարելուց հետո, պատգամավորությունը մի որոշ ժամանակ ևս մնում է Հայրենիքում։

Գրքի հետագա էջերում Սիոն սրբազանը խանդավառ զգացումներով, հայրենասիրական արդար հպարտությամբ է խոսում իր հայրենի հողին վրա ապրող հայ ժողովրդի ներշնչի ու խաղաղ կյանքի մասին, նրա պայքարի ու հաղթանակի մասին, նրա լուսաբայծառ ներկայի և վառ ապագայի մասին, մեր Հայրենիքի «անսխալեթաց, հսկայաբալլ վերելքին ու վերակառուցումին, անոր ֆիզիկական ու իմացական հուռաշրթունքին, մշակույթի և գեղարվեստի լուսավոր նվաճումներուն մասին» (էջ 14)։

Իր առաջին այցելությունից տաս տարի հետո, նորից հայրենի հողի վրա է Սիոն սրբազանը։ Հնասիր ճորիզոններից, օտար արհիերից թույլ եկել է իր Հայրենիքը, «համբուրելու մեր նախնայց քրտինքով և արյունով սրբացած Հայաստանի հողը», միաձուլվելու՝ անոր վրա ապրող ու կերտող մեծագործ ժողովուրդին... նույնապես իր արյունի եղբայրներուն հետ, և խառնելու իր ալ մարդու քրտինքը և արդար վաստակը այդ ստեղծագործող ժողովուրդի վաստակին հետ... և ոգևորել խաբրիկներ տանելու վերածնված Հայրենիքին»՝ օտար և անհուշերկալ արհիւրում «զօրէն մոլորական աստեղաց» ապրող հայրենասեր, հայրենակարոտ հայորդիներին։

Սիոն սրբազանը, որպես ճշմարտապես հայրենասեր հոգևորական, հպարտ է իր Հայրենիքով։ Նա շատ լավ գիտի հայ բաղձալարչար ժողովրդի անցյալի արյունառ, բայց հերոսական պատմությունը և սրտանց ուրախ է, որ հայ ժողովուրդը գտել է իր փրկության և ազգային վերածննդյան ճիշտ ու միակ ուղին. «Հայրենի հողն արմատախել հայ ժողովուրդը շուտով արմատ կըռն իր Հայրենիքի հարազատ հողին վրա, ու հրաշալի արագությամբ կանի, կուճանա և կպտղաբերի։ Հայկական ծառը Հայաստանի հողին վրա միայն գորավոր արմատ կըռն, մխրճվելով հայրենի պարսառ ու բառերի հողին մեջ» (էջ 14) (ընդգծում մերն է։— Ա. Հ.)։

Առողջ ու կենսունակ է Սիոն սրբազանի հայրենասիրական զգացմունքների և խորհրդածությունների ակունքը. «Ժողովուրդ մը ազգ չէ՝ կթն Հայրենիք չունի... ծառ մը օդին մեջ արմատ չի կրնար ձգել, այլ հող պետք է, որպեսզի անոր մեջ արմատ քանի։ Նույնպես ժողովուրդ մը, առանց հայրենի հողի, չի կրնար ապրիլ ու կերտել, չի կրն և ստեղծագործել, և հավիտենորեն ապրիլ» (էջ 14)։

Մեծուհեա Սիոն սրբազանը չեմո՝ անկեղծ հուզականությամբ, անմիջականությամբ, իրիկական

զամանորդ պատմում է իր տպավորությունները «գեղակառույց Երևանի», մեր մտավորականների և արվեստագետների հետ ունեցած հանդիպումների մասին:

Սրբազանը սրտի անհուն բերկրանքով և հայրենասերի խանդավառությամբ է խոսում մեր Հայրենիքի սեխնիկայի, գլուղատնտեսության, գիտության և այլ բնագավառներում ձեռք բերված բացառիկ նվաճումների մասին:

Հայրենի հողին վրա սրբազանի ուշադրությունն է դրավում առաջին հերթին «գեղակառույց Երևանը»: Նա ջերմ տողեր է նվիրել Երևանին՝ բանաստեղծի սրտով, հայրենասերի վառ զգացմունքով: «Երևանը անճանաչելի է տասը տարի առաջ այցելողի մը» (էջ 33), «Երևանը հույսահալ ու ինքնատիպ ոճով կառուցված շենքերու համայն է, քարեղեն երգն է հայ հոգիին, ազգային բանաստեղծությունն է, գիրի և արվեստի կոթողն է, որ մեր դասական արվեստի կնիքը կկրն իր վրա, դառնալով արգիական իր պարզությամբ ու գեղեցիկությամբ, Քարեղեն բերթվածն է իր գեղեցիկ կերտվածքով»:

Սրբազանի համար հայրապետության, խնդրության անսպառ աղբյուր են «հայկական անգերազանց ու հույս-կերտ ճարտարապետական ոճով» շինված՝ «պետական պալատը... վարչապետին պաշտոնատունը, ներկայացուցիչներու հոյակերտ տունը, պետական օպերան, գեղարվեստի տունը, ծածկյալ շուկան, ֆիլհարմոնիայի նորակառույց մեծ ու շքեղ դահլիճը»: Ավելին, «նույնիսկ ժողովրդական բնակարանների արվեստի մեկ մեկ կոթողներ են և նմուշներ՝ հայ ճարտարապետության» (էջ 33—34):

Սրբազանի հայրենասեր գրչի տակ ոգի և կյանք են առնում կրկին անգամ հայրենի բնության հրաշալիքները: Ամեն ինչ ինքնատիպ է հայրենի երկրում և ունի «ազգային նկարագիր»:

Ահա՛ Արարատյան դաշտը իր անսահման արտերով, «որոնք մեջեն արծաթեն երկղներու պես առուները կհոսին ու կոռոզին Հայաստանի բարերեր հողը»:

Նվ սրբազան հեղինակը հասնում է ճիշտ ընդհանրացումների, եզրակացության: «Այսօր Հայաստանի լեռն ու ապառաժուտ լեռներն իսկ կմշակվին ու կզարգարվին ծառերով»:

Ամեն քայլափոխի սրբազանը ունկնդրում է կառուցումները զվարթ ու կենսահորդ երգը: ամեն կողմ ստեղծագործ աշխատանք, «հայ ժողովուրդը կկերտեն իր հայրենուն պատմական երկիրը» (էջ 41):

Արարե, բյուր երազներ են ծաղկում այսօր հայ ժողովրդի հոգում, որն փր արգար ու խաղաղ աշխատանքով ծալերից վարդ է քաղում, քարերը փոխակերպում հացի, լուսի, կյանքի, և բուժում իր անցյալի արյունոտ վերքերը: Բնաշխարհի հայությունը իր ազգային պետության հիմքերն է կերտում և ամրապնդում և հրաշագործում և պայծառազարդում հայրենական սուրբ օջախը: «Այսօր, — գրում է Սիոն սրբա-

զանը, — նոր քաղաքակրթություն մը կծաղկի: Արարատյան դաշտին վրա... Հայաստանը գրքի երկիր է, մշակույթի և արվեստի երկիր, ուր հայրենի հողին վրա կծաղկի ազգային մշակույթը, գրականությունը»: Իսկ ի՞նչ բախտ է վիճակված Սփյուռքի մեր մտավորականության, «ամենց ոտքին տակ կպակսի հայրենի հողին կենսատու ուժը... անոնք շեն կրնար լիովին տալ հայ արվեստը...», իսկ «հայ արվեստը այսօր, իր գեներթին կմոտենա հայրենի հողին վրա» (էջ 49):

«Ահա թե ինչու, — եզրակացնում է սրբազանը, — այսօր, հայրենի հողին վրա կծաղկի հրաշալի հայկական գրականություն մը, արժեքավոր հայ գեղարվեստ մը, որ պատիվ կբերե հայության» (էջ 44):

Վերոհիշյալ արժանիքներով շեն սպառվում, արդարև, Սիոն սրբազանի այս փոքրիկ գրքի մեծ արժանիքներն ու առավելությունները:

Գրքի առաջին էջից մինչև վերջը, կարմիր թևի նման, անցնում է սրբազան հեղինակի հայրենասիրական շունչը: Սրբազանը իր ակամոտեսի անաչառ ու խանդավառ տպավորություններն է պատմում Հայրենիքից: Սրբազան հեղինակի խանդավառությունն ու ոգևորությունը բխում են իրականությունից, նրա տեսածից: Սրբազանի «Հայրենի երկիրն մեջ» գրքույկը սողողոված է բարձր հայրենասիրությամբ, և դրա համար էլ հաճույքով և հոգեկան մեծ բավարարությամբ է կարդացվում:

Սրբազանը հասել է իր առաջգրած նպատակին՝ «ոգևորել խորրիկներ» տալ Հայրենիքից, նրա սիրով և լուսապայծառ իրականությամբ տաքացնել հեռավոր ու օտար մայրերի վրա թափառող հայրենակարոտ հայրեղիների սրտերը: Գրքի մեծ արժանիքն էլ կազմում է հենց այն՝ որ սրբազանին հաջողվել է գեղարվեստական համոզությամբ, գեղեցիկ պատկերներով, և դրան համապատասխան գողտրիկ խորհրդածություններով, ցույց տալ մեր վերածնված Հայրենիքի՝ անցյալի ավերի և մոխիրների միջից Փյունիկի նման հարություն առած Սովետական Հայաստանի՝ գեմքը, իրականությունը, առօրյան, իր ազգային դեմքով և ոճով:

«Հայրենի երկրին մեջ» արժեքավոր գրքի արժանիքը նրա կենդանի, բաբախուն շունչն է, հայրենասիրական զգացմունքի հարազատությունն ու անկեղծությունը, թափն ու խորությունը:

Մյուսապին շնորհալուրերով Սիոն եպիսկոպոսին այս նոր հաջողված համար ևս, ցանկանում ենք նրան ավելի արդյունավետ, շինիլ ազգային-կեղեցական գործունեություն:

Վստահ ենք, որ յուրաքանչյուր հայրենասեր հայ սիրով և մեծ հաճությամբ կկարդա Սիոն եպիսկոպոսի «Հայրենի երկիրն մեջ» — ջերմ շնորհ, հայրենասերի վառ զգացմունքներով գրված այս գեղեցիկ գրքույկը:

Ա. Հ.

